

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԼՅՈՒԹ

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տե՛ս www.immunize.org/vis կայքը

# Ռոտավիրուսի պատվաստանյութ

## Ինչ է անհրաժեշտ Ձեզ իմանալ

### 1 Ինչու՞ պատվաստվել:

Ռոտավիրուսը մի վիրուս է, որն առաջացնում է փորլուծություն՝ հիմնականում նորածինների և մանկահասակ երեխաների մոտ: Փորլուծությունը կարող է լինել խիստ և հանգեցնել օրագրկման: Փսխումը և ջերմությունը նույնպես տարածված են ռոտավիրուսով տառապող երեխաների մոտ:

Նախքան ռոտավիրուսի պատվաստանյութի կիրառումը, ռոտավիրուս հիվանդությունը տարածված էր և լուրջ առողջական խնդիր էր երեխաների համար Միացյալ Նահանգներում: Միացյալ Նահանգներում համարյա բոլոր երեխաները նվազագույնը ռոտավիրուսի մեկ վարակ ունեին նախքան իրենց 5-<sup>րդ</sup> ծննդյան տարեդարձը:

Յուրաքանչյուր տարի, նախքան պատվաստանյութի հասանելի լինելը:

- Ավելի քան 400 000 մանկահասակ երեխաներ ստիպված էին այցելել բժշկին՝ ռոտավիրուսի հարուցած հիվանդության պատճառով,
- Ավելի քան 200 000-ը ստիպված էին այցելել շտապ օգնության սենյակ,
- 55 000-ից մինչև 70 000-ը ստիպված էին հոսպիտալացվել իսկ
- 20-ից մինչև 60-ը մահացել էին:

Ռոտավիրուսի պատվաստանյութի կիրառումից սկսած՝ ռոտավիրուսի պատճառով հոսպիտալացումները և շտապ օգնության այցելությունները կտրուկ նվազել են:

### 2 Ռոտավիրուսի պատվաստանյութ

Հասանելի են ռոտավիրուսի պատվաստանյութի երկու ապրանքանիշներ: Ձեր երեխան կստանա 2 կամ 3 դեղաչափ՝ կախված այն բանից, թե որ պատվաստանյութն է օգտագործվում:

Խորհուրդ են տրվում հետևյալ դեղաչափերը՝ հետևյալ տարիքներում:

- Առաջին դեղաչափը՝ 2 ամսական հասակում
- Երկրորդ դեղաչափը՝ 4 ամսական հասակում
- Երրորդ դեղաչափը՝ 6 ամսական հասակում (եթե նախատեսված է)

Ձեր երեխան պետք է ստանա ռոտավիրուսի պատվաստանյութի առաջին դեղաչափը մինչև 15 շաբաթականը, իսկ վերջինը՝ մինչև 8 ամսականը: Ռոտավիրուսի պատվաստանյութը կարող է ապահով տրվել այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ:

Ռոտավիրուսի պատվաստանյութ ստացող համարյա բոլոր երեխաները կաշտապանվեն ռոտավիրուսի սուր փորլուծությունից: Այս երեխաների մեծ մասն ամենաին էլ չեն ունենա ռոտավիրուսի փորլուծություն:

Պատվաստանյութը չի կանխի այլ միկրոբների կողմից հարուցված լուծը կամ փսխումը:

Ռոտավիրուսի երկու պատվաստանյութերում էլ կարելի է հանդիպել խոզի ցիրկովիրուս անվամբ մեկ այլ վիրուսի: Սա մարդկանց վարակող վիրուս չէ, և անվտանգության հետ կապված ռիսկ չկա: Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս <http://wayback.archive-it.org/7993/20170406124518/> <https://www.fda.gov/BiologicsBloodVaccines/Vaccines/ApprovedProducts/ucm212140.htm> կայքը:

### 3 Որոշ երեխաներ չպետք է ստանան պատվաստանյութը

Երեխան, որը ռոտավիրուսի պատվաստանյութի դեղաչափի նկատմամբ ունեցել է կյանքին վտանգ սպառնացող ալերգիկ ռեակցիա, չպետք է ստանա մեկ այլ դեղաչափ: Երեխան, որը ռոտավիրուսի պատվաստանյութի կամ դրա որևէ մասի նկատմամբ ունի սուր ալերգիա, չպետք է ստանա այս պատվաստանյութը: *Հայտնի ձեր բժշկին, եթե ձեր երեխան ունի ձեզ հայտնի որևէ սուր ալերգիա, ներառյալ լատեքսի նկատմամբ սուր ալերգիան:*

«Իմունային անբավարարության սուր համակցությամբ» (severe combined immunodeficiency, SCID) երեխաները չպետք է ստանան ռոտավիրուսի պատվաստանյութը:

Երեխաները, որոնք տառապում են մի տեսակի աղիքային խցանմամբ, որը կոչվում է «աղիքային անանցանելիություն», չպետք է ստանան ռոտավիրուսի պատվաստանյութը:

Թեթևակի վատառողջ երեխաները կարող են ստանալ պատվաստանյութ: Չափավոր կամ խիստ հիվանդ երեխաները պետք է սպասեն մինչև կազդուրվելը: Սա ներառում է չափավոր կամ խիստ փորլուծություն կամ փսխում ունեցող երեխաներին:

Ստուգեք ձեր բժշկի հետ, թե արդյոք ձեր երեխայի իմունային համակարգը թուլացել է հետևյալ պատճառներով.

- ՄԻԱՎ/ՁԻԱՀ կամ իմունային համակարգի վրա ազդող այլ հիվանդություն
- բուժում դեղամիջոցներով, ինչպիսիք են ստերոիդները
- քաղցկեղ, կամ քաղցկեղի բուժում ռենտգենյան ճառագայթներով կամ դեղամիջոցներով

### 4 Պատվաստանյութի ազդեցության ռիսկերը

Պատվաստանյութից, ինչպես և այլ ցանկացած դեղորայքից, հնարավոր են կողմնակի ազդեցություններ: Դրանք սովորաբար մեղմ են և ինքնուրույն վերանում են: Հնարավոր են նաև լուրջ կողմնակի ազդեցություններ, բայց դրանք շատ հազվադեպ են:

Ռոտավիրուսի պատվաստում ստացող երեխաների մեծ մասը խնդիրներ չունեն դրա հետ: Սակայն որոշ խնդիրներ կապված են ռոտավիրուսի պատվաստման հետ:

Ռոտավիրուսի պատվաստմանը հաջորդող մեղմ խնդիրներ.

- Ռոտավիրուսի պատվաստանյութ ստանալուց հետո երեխաները կարող են դառնալ դյուրագրգիռ կամ կարող են ունենալ թեթև ժամանակավոր փորլուծություն կամ փսխում:



U.S. Department of Health and Human Services  
Centers for Disease Control and Prevention

**Ռոտավիրուսի պատվաստմանը հաջորդող լուրջ խնդիրներ.**

- Աղիքային անանցանելիությունը մի տեսակի աղիքային խցանում է, որը բուժվում է հիվանդանոցում, և կարող է պահանջել վիրահատություն: Դա սովորաբար տեղի է ունենում որոշ երեխաների մոտ յուրաքանչյուր տարի՝ Միացյալ Նահանգներում, և դրա համար սովորաբար հայտնի պատճառ չկա:

Ռոտավիրուսի պատվաստանյութից նաև աղիքային անանցանելիության փոքր վտանգ կա, սովորաբար 1-<sup>6</sup> կամ 2-<sup>9</sup> պատվաստանյութի դեղաչափից հետո: Գնահատվել է, որ Միացյալ Նահանգներում ռոտավիրուսի պատվաստանյութ ստացող երեխաների մոտ լրացուցիչ վտանգը տատանվում է 20 000-ից մոտավորապես 1-ի մոտ և 100 000-ից՝ մոտավորապես 1-ի մոտ: Ձեր բժիշկը Ձեզ կարող է ավելի շատ տեղեկատվություն տրամադրել:

**Խնդիրներ, որ կարող էին առաջանալ պատվաստումից հետո.**

- Ցանկացած դեղամիջոց կարող է առաջացնել խիստ այերգիլ ռեակցիա: Լման ռեակցիաները պատվաստանյութից շատ հազվադեպ են՝ 1 միլիոն դեղաչափից ավելի քիչ և սովորաբար առաջանում են պատվաստումից հետո մի քանի ժամից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի հետ, պատվաստանյութի պատճառով լուրջ վնասվածքի կամ մահվան շատ հեռավոր հավանականություն կա:

Պատվաստանյութերի անվտանգությունը միշտ վերահսկվում է: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք՝ [www.cdc.gov/vaccinesafety/](http://www.cdc.gov/vaccinesafety/)

5

Ի՞նչ տեղի կունենա, եթե առաջանա լուրջ խնդիր:

**Ի՞նչ պետք է ես փնտրեմ:**  
**Աղիքային անանցանելիության** համար փնտրեք ստամոքսի ցավի նշաններ՝ համակցված ուժեղ լացով: Սկզբնական փուլում նման դրվագները կարող են տևել ընդամենը մի քանի ժամ և մեկ ժամվա ընթացքում կրկնվել մի քանի անգամ: Երեխաները կարող են կծկել իրենց ոտքերը իրենց կրծքի մոտ:

Ձեր երեխան կարող է մի քանի անգամ փսխել կամ կղանքի մեջ ունենալ արյուն, կամ թվալ թույլ կամ շատ դյուրագրգռ: Այս նշանները կարող են տեղի ունենալ առաջին շաբաթվա ընթացքում ռոտավիրուս պատվաստանյութի 1-<sup>6</sup> կամ 2-<sup>9</sup> դեղաչափից հետո, սակայն ակնկալեք դրանք պատվաստումից հետո ցանկացած ժամանակ:

Ակնկալեք նաև ձեզ վերաբերող ցանկացած այլ բան, ինչպես, օրինակ՝ սուր այերգիլ ռեակցիա, շատ բարձր ջերմություն կամ անսովոր վարքագիծ:

**Խիստ այերգիլ ռեակցիայի** նշանները կարող են ներառել՝ ցան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, ծանր շնչառություն կամ անսովոր քնկոտություն: Սրանք սովորաբար սկսվում են պատվաստումից հետո մի քանի ժամից մինչև մի քանի ժամ անց:

**Ի՞նչ պետք է ես անեմ:**  
 Եթե դուք կարծում եք, որ դա **աղիքային անանցանելիություն է**, անմիջապես բժիշկ կանչեք: Եթե չեք կարող կապվել ձեր բժշկի հետ, երեխային տարեք հիվանդանոց: Հայտնեք նրանց, թե երբ է ձեր երեխան ստացել ռոտավիրուսի պատվաստանյութ:

Եթե դուք կարծում եք, որ դա **սուր այերգիլ ռեակցիա** է կամ այլ անհետաձգելի դեպք, որը չի կարող սպասել, զանգահարեք 9-1-1 կամ տեղափոխեք ձեր երեխային մոտակա հիվանդանոց:  
 DCH-0577A

AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.  
 Translation provided by the Immunization Action Coalition

Այլապես՝ զանգահարեք Ձեր բժշկին:  
 Այնուհետև, ռեակցիայի մասին պետք է զեկուցել Vaccine Adverse Event Reporting System-ին (VAERS) (Պատվաստանյութերի անբարենպաստ ազդեցությունների հաշվետվությունների համակարգ): Ձեր բժիշկը կարող է գրանցել այս զեկուցող, կամ դա դուք կարող եք ինքներդ էլ անել VAERS վեբ կայքի միջոցով՝ [www.vaers.hhs.gov](http://www.vaers.hhs.gov), կամ զանգահարելով 1-800-822-7967 հեռախոսահամարով:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տալիս:

6

Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր

National Vaccine Injury Compensation Program-ը (VICP) (Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից սուժած մարդկանց:

Մարդիկ, ովքեր կարծում են, որ վնասվել են պատվաստանյութից, կարող են իրազեկվել ծրագրի մասին և բողոք ներկայացնելու մասին՝ զանգահարելով 1-800-338-2382 կամ այցելելով VICP կայք [www.hrsa.gov/vaccinecompensation](http://www.hrsa.gov/vaccinecompensation): Բողոք ներկայացնելու համար ժամանակային սահմանափակում կա:

7

Ինչպե՞ս կարող եմ ավելիս իմանալ:

- Հարցրեք ձեր բժշկին: Լա կարող է ձեզ տալ պատվաստանյութի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկատվության այլ աղբյուրներ:
- Չանգահարեք ձեր տեղական կան նահանգային առողջապահական բաժանմունք:
- Կապվեք Centers for Disease Control and Prevention-ի (CDC) (Հիվանդության վերահսկման և կանխարգելման կենտրոնների) հետ. **1-888-767-4687**  
 - Չանգահարեք 1-800-232-4636 հեռախոսահամարով (1-800-CDC-INFO) կամ  
 - Այցելեք CDC-ի կայք հետևյալ հասցեով՝ [www.cdc.gov/vaccines](http://www.cdc.gov/vaccines)

Vaccine Information Statement  
 Rotavirus Vaccine

02/23/2018

Armenian

Office Use Only

42 U.S.C. § 300aa-26

Բժշկական խնամք ապահովողներ Քին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամքապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: